Գյուղատնտեսություն

1. 2006-2008 թվականների Ազգային ծրագրի գյուղատնտեսության գլխի գերակայությունները

Գյուղատնտեսության ոլորտում գերակայությունների սահմանման անհրաժեշտությունը կախված է ԵՄ այդ ոլորտի մեծածավալ օրենսդրության յուրահատուկ կառուցվածքից և նպատակներից: Այդ օրենսդրության հիմնական մասը կանոնակարգում է Եվրամիության կողմից գյուղատնտեսական արտադրության և գյուղական վայրերի, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների արտահանման սուբսիդավորումը, սահմանում է գյուղմթերքների և սննդամթերքների ներմուծման սահմանափակումները: Օրենսդրության այդ մասը տարածվում է միայն ԵՄ անդամ երկրների վրա և, հետևաբար, չի կարող ներկայիս փուլում կիրառվել Հայաստանում:

Մյուս կողմից ԵՄ գյուղատնտեսության ոլորտի օրենսդրության նշանակալի մասը նպատակաուղղված է գյուղմթերքների և սննդամթերքի որակի և արտադրության կազմակերպական ընդհանուր ստանդարտների և պահանջների սահմանմանը՝ ելնելով մարդու առողջության և բնության վրա բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ ընդհանրապես բացառելու անհրաժեշտությունից:

ԵՄ գյուղատնտեսությանը վերաբերող օրենսդրությունը հիմնված է 3 ընդարձակ բաղկացուցիչ մասերի վրա՝

- ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունը (CAP) և գյուղական զարգացումը, որոնց նպատակն է սահմանել և կիրառել արտադրական և արտահանման սուբսիդիաների ֆինանսավորման և հատկացման կարգը, կարգավորել Եվրամիության համար զգայուն գյուղմթերքների և սննդամթերքների ներմուծումը, ինչպես նաև նպաստել գյուղատնտեսական շրջանների զարգացմանը,
- սննդամթերքի անվտանգությունը, որը միասնական պահանջներ է սահմանում մարդու և կենդանու սննդի արտադրական շղթայի բոլոր բաղկացուցիչ մասերի նկատմամբ (այդ ոլորտը բաժանված է ԵՄ օրենսդրության ապրանքների ազատ տեղաշարժի, գյուղատնտեսության, ինչպես նաև սպառողների և առողջության պահպանման գլուխների միջև, որտեղ գյուղատնտեսությանը նվիրված գլխում հիմնական շեշտը դրվում է կենդանիների սննդի, կենդանիների պաշտպանման, անասնաբուժության և անասնաբուծության, ինչպես նաև բույսերի պաշտպանման հարցերի վրա),
- գյուղատնտեսական շուկաների կազմակերպմանը և գործունեությանը վերաբերող ընդհանուր պահանջներ, որոնք կարգավորում են արտադրությունը, արտահանումը և ներմուծումը՝ ելնելով կոնկրետ գյուղատնտեսական կամ սննդամթերքի շուկաների առանձնահատկություններից (օրինակ՝ ցորենի շուկա, մսի շուկա, շաքար, պտուղ-բանջարեղեն և այլն):

Ելնելով Հայաստանի ներկայիս գյուղատնտեսական զարգացման մակարդակից և ոլորտում վարվող քաղաքականությունից, ինչպես նաև հաշվի առնելով ԵՄ գյուղատնտեսական օրենսդրության և քաղաքականության առանձնահատկությունները, ԵՄ նոր անդամ և անդամակցող երկրների փորձը՝ ներկայիս Ազգային ծրագրի համար գերակայություններ են ճանաչվել՝

- սննդի անվտանգության հետ կապված ոլորտը՝ հաշվի առնելով գյուղմթերքների և սննդամթերքների արտադրության, արտահանման և ներմուծման ներկայիս կառուցվածքը,
- գուղատնտեսական առանձին մթերքների շուկաների կազմակերպման ոլորտը (ընդհանուր ստանդարտներին վերաբերող մասով),
- գյուղական զարգացման ոլորտը (զարգացման ծրագրերին ներկայացվող պահանջների մասով):

Ներկայումս, երբ Հայաստանը դեռ չունի գյուղատնտեսության սուբսիդավորման և օժանդակության ազգային ռազմավարություն, ԵՄ գյուղատնտեսական սուբսիդավորմանը վերաբերող օրենսդրության համապատասխանեցումը գերակայություն չի համարվել:

2. Սննդամթերքի անվտանգություն

Ներածություն

Սննդամթերքի անվտանգությունը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույթները գրեթե ամբողջովին չեն համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

Սննդամթերքի անվտանգության բնագավառում (գյուղատնտեսությանը վերաբերող մասով) Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է գյուղատնտեսական կենդանիների առողջության, անասնաբուժական ստուգումների, բույսերի առողջության, սննդամթերքի հիգիենայի, ինչպես նաև սպառողների իրազեկ լինելու հետ կապված խնդիրները: Նշված խնդիրները Հայաստանում կարգավորվում են «Սննդամթերքի անվտանգության մասին»[1], «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին»[2], «Անասնաբուժության մասին»[3], «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին»[4], «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»[5] ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Հայաստանում գործող իրավական ակտերի մեծ մասը ընդհանուր նկարագիր է տալիս խնդրո հարցերի վերաբերյալ:

ԵՄ օրենսդրության համաձայն՝ սննդամթերքի անվտանգության ապահովումը ներառում է նաև անասնակերի անվտանգությունը: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտը բաց է, քանի որ անասնակերի անվտանգությունը կարգավորող իրավական նորմերը բացակայում են ՀՀ օրենսդրությունում:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությունում բացակայում են էկոլոգիապես (կենսաբանորեն) մաքուր գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը կարգավորող նորմեր, որոնց առկայության դեպքում էականապես կհեշտացվի հայկական գյուղատնտեսական ապրանքների արտահանումը ԵՄ շուկա:

ՀՀ-ում սննդամթերքի անվտանգությունը կարգավորում են հետևյալ գերատեսչությունները.

- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, որն «իր նպատակների ու խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է սննդամթերքի անվտանգության, ինչպես նաև դրա հետ առնչվող սարքավորումների տեխնոլոգիական, անասնաբուժական, բուսասանիտարական նորմերի ապահովման նկատմամբ պետական վերահսկողությունը»[6]:
- ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ ու համաճարակային պետական տեսչությունը, որի իրավասության շրջանակներում է գտնվում բնակչության համար սննդամթերքի անվտանգության ապահովման հսկողությունը կապված՝

ա) հիգիենիկ փորձաքննության և լաբորատոր հետազոտություններ կատարելու նպատակով պարենահումքի ու սննդամթերքի նմուշառման,

բ) պարենահումքի և սննդամթերքի արտադրության բնագավառում սննդային հավելումների ու հատուկ կենսաբանական ակտիվ նյութերի ներմուծման և օգտագործման, նոր տեխնոլոգիաների կիրառման, նոր տեսակի սննդամթերքի մշակման ու արտադրության, ինչպես նաև պարենահումքի ու սննդամթերքի հետ առնչվող պոլիմերային և այլ բնույթի նյութերի, տարաների օգտագործման հետ[7]:

- ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, որի գործունեության ուղղություններից է Հայաստանի Հանրապետության տնտեսական և պարենային անվտանգությանը սպառնացող վտանգների կանխման միջոցառումների մշակումը[8]: Սննդամթերքի որակի հարցերով զբաղվում է նախարարության Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման վարչությունը, ինչպես նաև Որակի տեսչությունը:

---

[1] ՀՕ-25, 08.12.1999թ.:
[2] ՀՕ-43, 12.12.1992թ.:
[3] ՀՕ-16, 26.10.1999թ.:
[4] ՀՕ-46, 20.03.2000թ.:
[5] ՀՕ-197, 26.06.2001թ.:
[6] 2002թ. սեպտեմբերի 5-ի ՀՀ կառավարության որոշում թիվ 1516-Ն՝ «ՀՀ գյուղատնտեսության նախարարություն» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին»:
[7] 2002թ. օգոստոսի 15-ի ՀՀ կառավարության որոշում թիվ 1316-Ն՝ «ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ ու համաճարակային ծառայությունը և դրա ենթակայության մարմինները վերակազմակերպելու և ՀՀ պետական հիգիենիկ ու համաճարակային տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին»:
[8] 2002թ. հուլիսի 11-ի ՀՀ կառավարության որոշում թիվ 1229-Ն՝ «ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2002թ. մարտի 6-ի թիվ 197 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

2006 թվական

Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի ոլորտում նախատեսվում է մշակել «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» օրենքի նոր նախագիծ, ինչպես նաև լրացումներ և փոփոխություններ կատարել «Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող այլ առարկաների ներմուծման ու արտահանման բուսասանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ, որոնք հիմնականում կվերաբերեն որոշակի ակտիվ նյութեր պարունակող բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումն ու վաճառքը արգելելու, ինչպես նաև բույսերի և բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմների ներմուծման և տարածման կանխարգելիչ միջոցառումներին[9]:

Նախատեսվում է նաև «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի նոր նախագծի մշակում՝ հիմք ընդունելով Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգը[10]: Այս նոր օրենքով կնախատեսվի Սննդամթերքի անվտանգության գործակալության ստեղծումը:

Հաշվի առնելով ՀՀ-ում էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական ապրանքների արտադրության իրավական կարգավորման անհրաժեշտությունը՝ նախատեսվում է մշակել «Էկոլոգիապես (կենսաբանորեն) մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրության մասին» օրենքի նախագիծը՝ Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգի հիման վրա[11]:

Նախատեսվում է նաև «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը՝ Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգի հիման վրա[12]:

Գյուղատնտեսական ապրանքներում պեստիցիդների առավելագույն քանակը հսկելու համար նախատեսվում է մշակել «Կենդանական և բուսական ծագման ապրանքներում պեստիցիդների և նիտրատների առավելագույն մնացորդների քանակը հաստատելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագիծը՝ հիմք ընդունելով Եվրամիության խորհրդի համապատասխան դիրեկտիվները[13]:

ՀՀ օրենսդրությունում անասնակերի հետ կապված հարցերի կարգավորումն ապահովելու նպատակով նախատեսվում է մշակել «Անասնակերի մասին» օրենքի նոր նախագիծ: Ստուգումների արդյունավետության բարձրացման համար լրացումներ և փոփոխություններ կկատարվեն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում՝ հիմք ընդունելով Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգը[14]:

Ինստիտուցիոնալ կարողությունները ուժեղացնելու նպատակով կկազմակերպվեն դասընթացներ՝ սննդամթերքի հիգիենայի, HACCP-ի և սննդամթերքի անվտանգության մենեջմենթի թեմաներով:

2007 թվական

Անասնաբուժական վերահսկողության ուժեղացման նպատակով նախատեսվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում, որոնք կհամապատասխանեցվեն Եվրամիության խորհրդի մի շարք դիրեկտիվների[15]:

---

[9] 1978թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 79/117՝ «Որոշակի ակտիվ նյութեր պարունակող բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումն ու վաճառքը արգելելու մասին», 1994թ. դեկտեմբերի 21-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 3223/94՝ «Պտուղ-բանջարեղենի ներմուծման ձևակերպումների կիրառման համար մանրամասն կանոնների մասին», 2000թ. մայիսի 8-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2000/29՝ «Բույսերի և բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմների ներմուծման և համայնքում դրանց տարածումը կանխելու համար միջոցառումների իրականացման մասին»:

[10] 2002թ. հունվարի 28-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 178/2002՝ «Սննդամթերքի օրենքի հիմնական սկզբունքներն ու պահանջները հաստատելու, սննդամթերքի անվտանգության հարցերով եվրոպական կառույց ստեղծելու և սննդամթերքի անվտանգության հարցերի ընթացակարգեր հաստատելու մասին»:

[11] 1991թ. հունիսի 24-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2092/91՝ «Գյուղատնտեսական ապրանքների էկոլոգիապես մաքուր արտադրության և այդպիսի գյուղատնտեսական ապրանքների ու սննդամթերքի նշումների մասին»:

[12] 2001թ. հունիսի 12-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1148/2001՝ «Թարմ պտուղ-բանջարեղենի համար կիրառվող մարքեթինգային ստանդարտների համապատասխանության ստուգման մասին»:

[13] 1976թ. նոյեմբերի 23-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 76/895՝ «Պտուղ-բանջարեղենում պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու մասին», 2002թ. հուլիսի 11-ի Հանձնաժողովի դիրեկտիվ թիվ 2002/63՝ «Համայնքում կենդանական և բուսական ծագում ունեցող ապրանքներում պեստիցիդների մնացորդային քանակը հսկելու համար, նմուշառման մեթոդների ստեղծման մասին», 1990թ. նոյեմբերի 27-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 90/642՝ «Բուսական ծագում ունեցող որոշ ապրանքներում (ներառյալ՝ պտուղ-բանջարեղենը) պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու մասին»,
1986թ. հուլիսի 24-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 86/362՝ «Հացահատիկային մշակաբույսերում պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու մասին»:

[14] 2004թ. ապրիլի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 882/2004՝ «Սննդամթերքի և անասնակերի օրենքի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների առողջության և անասնապահության կանոնների կատարման ուղղությամբ պաշտոնական ստուգումներ կազմակերպելու մասին»:

[15] 1989թ. դեկտեմբերի 11-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 89/662՝ «ԵՄ տարածքում առևտրի ընթացքում անասնաբուժական վերահսկողության մասին»,

«Անասնակերի մասին» օրենքի կիրարկմանն առնչվող ստուգումների արդյունավետության բարձրացման և սննդամթերքի անվտանգության ապահովման համար կմշակվի «Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգությունն ապահովող ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագիծը՝ հիմք ընդունելով Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգը[16]:

ՀՀ օրենսդրությունում անասնակերի հետ կապված հարցերի կարգավորումն ապահովելու նպատակով նախատեսվում է մշակել նաև «Անասնակերում օգտագործվող լրացակերերի մասին և անասնակերում անցանկալի նյութերի օգտագործումը կանխելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը՝ հիմք ընդունելով Եվրամիության խորհրդի համապատասխան դիրեկտիվները[17]:

Նախատեսվում է լրացումներ և փոփոխություններ կատարել «Անասնապահական բեռների միջազգային և միջպետական փոխադրումների ժամանակ անասնաբուժական պետական հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ՝ հաշվի առնելով կենդանիների և կենդանական ծագման ապրանքների սերտիֆիկացման, ինչպես նաև ներկրվող ապրանքների անասնաբուժական ստուգման համար պատասխանատու սահմանային հսկիչ կետերի հաստատման պահանջները[18]:

Նախատեսվում է «Թռչնամսի, ձվի և ձվամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող պահանջների մասին» և «Մսի ու մսամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող պահանջների մասին» համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակումը՝ Եվրամիության խորհրդի համանուն դիրեկտիվների հիման վրա[19]:

Նախատեսվում է նաև «Ընտանի թռչնի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման և «Ձվի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծերի մշակումը՝ Եվրամիության խորհրդի համապատասխան կանոնակարգերի հիման վրա[20]:

Ինստիտուցիոնալ կարողությունները ուժեղացնելու նպատակով կկազմակերպվեն դասընթացներ սննդամթերքի անվտանգության մենեջմենթի թեմայով, ինչպես նաև կանցկացվեն սեմինարներ սննդամթերքի վերահսկողության լաբորատորիաների աշխատակիցների համար, որոնց ընթացքում կքննարկվեն որակի ապահովման, վիճակագրական մեթոդների օգտագործման, անալիզների մեթոդների հարցերը:

2008 թվական

Կմշակվեն նաև «Մարդկանց սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի առողջապահական կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ Եվրամիության խորհրդի համանուն կանոնակարգի հիման վրա[21], ինչպես նաև «Գյուղատնտեսական

1982թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 82/894՝ «ԵՄ տարածքում կենդանիների հիվանդությունների ծանուցման մասին», 1992թ. հուլիսի 13-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 92/65՝ «Կենդանիների սերմնահեղուկի, սաղմի, ձվաբջիջների՝ Համայնքի տարածքում առևտրի և ներմուծման ընթացքում կենդանիների առողջության պահանջների վերաբերյալ»,
1990թ. հունիսի 26-ի Խորհրդի որոշում թիվ 90/424՝ «Անասնաբուժության բնագավառում ծախսերի մասին»:

[16] 2004թ. ապրիլի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 882/2004՝ «Սննդամթերքի և անասնակերի օրենքի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների առողջության և անասնապահության կանոնների կատարման ուղղությամբ պաշտոնական ստուգումներ կազմակերպելու մասին»:

[17] 1998թ. հուլիսի 3-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1436/98՝ «Անասնակերային մթերքում որոշակի հավելանյութեր թույլատրելու մասին», 1982թ. հունիսի 30-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 82/471՝ «Կենդանիների սնուցման համար հատուկ նյութերի օգտագործման մասին», 2002թ. մայիսի 7-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/32՝ «Անասնակերում անցանկալի նյութերի մասին»,
1983թ. ապրիլի 18-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 83/228՝ «Կենդանիների սնուցման համար օգտագործվող հատուկ նյութերի գնահատման ուղեցույցերը սահմանելու մասին»:

[18] 1996թ. դեկտեմբերի 17-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/93՝ «Կենդանիների և կենդանական ծագում ունեցող ապրանքների սերտիֆիկացման մասին», 2001թ. նոյեմբերիր 21-ի Հանձնաժողովի որոշում թիվ 2001/812՝ «Երրորդ երկրներից Համայնք ներկրված ապրանքների անասնաբուժական ստուգման համար պատասխանատու սահմանային հսկիչ կետերի հաստատման պահանջների մասին»:

[19] 1989թ. հունիսի 20-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 89/437՝ «Ձվամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող հիգիենիկ և առողջապահական խնդիրների մասին», 1990թ. հոկտեմբերի 15-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 90/539՝ «Թռչնի և թխսված ձվի ներմուծումները և ներհամայնքային առևտուրը ղեկավարող կենդանիների առողջության պայմանների մասին», 1992թ. հուլիսի 23-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2137/92՝ «Համայնքի մանր եղջերավոր անասունների ամբողջական մսեղիքի դասակարգման սանդղակի և Համայնքի ոչխարի թարմ մսի և ամբողջական մսեղիքի որակի ստանդարտի սահմանման մասին», 1991թ. հուլիսի 29-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 91/497, որով փոփոխվում և խմբավորվում են թարմ մսի անդրհամայնքային առևտրի վրա ազդող առողջապահական խնդիրների մասին թիվ 64/433 դիրեկտիվը՝ այն տարածելով թարմ մսի արտադրության և իրացման վրա:

[20] 1990թ. հունիսի 26-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1906/90՝ «Ընտանի թռչնի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին», 1999թ. հուլիսի 19-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 1999/74՝ «Թխսկան հավեր պահելու համար նվազագույն ստանդարտներ սահմանելու մասին», 1990թ. հունիսի 26-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1907/90՝ «Ձվի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին»:

[21] 2002թ. դեկտեմբերի 3-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1774/2002՝ «Մարդկանց սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի առողջապահական կանոնների մասին»:

կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ Եվրամիության խորհրդի համանուն դիրեկտիվի հիման վրա[22]:

Ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացում

Հայաստանում սննդամթերքի անվտանգության հարցերի կառավարումը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի նոր նախագծի մշակման արդյունքում 2007թ.-ին նախատեսվում է Սննդամթերքի անվտանգության գործակալության ստեղծումը, որը կվարի սննդամթերքի անվտանգության միասնական քաղաքականություն և պատասխանատու կլինի սննդամթերքի անվտանգությունը կարգավորող օրենսդրության կիրառման համար: Այդ կառույցը կապահովի բազմակողմանի և լիարժեք ռազմավարություն սպառողներին մատակարարվող ամբողջ սննդամթերքի որակի և անվտանգության համար, ներառյալ՝ տեղական, ներմուծվող և արտահանվող սննդամթերքը:

[22] 1998թ. հուլիսի 20-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/58՝ «Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության մասին»:

2.1.Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Որոշակի ակտիվ նյութեր պարունակող բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումն ու վաճառքը արգելելու մասին 1978թ. դեկտեմբերի 21-ի թիվ 79/117 Խորհրդի դիրեկտիվ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	4րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
2.	«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	Սննդամթերքի և անասնակերի օրենքի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների առողջության և անասնապահության կանոնների համապատասխանությունը ստուգելու համար պաշտոնական ստուգումներ կազմակերպելու մասին 2004թ. ապրիլի 29-ի թիվ 882/2004 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	4-րդ եռամսյակ	20	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	«Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող այլ առարկաների ներմուծման ու արտահանման բուսասանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի մշակում	Պտուղ-բանջարեղենի ներմուծման ձևակերպումների կիրառման համար մանրամասն կանոնների մասին 1994թ. դեկտեմբերիի 21-ի թիվ 3223/94 Հանձնաժողովի կանոնակարգ Բույսերի և բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմների ներմուծման և համայնքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ մաքսային պետական կոմիտե)	4-րդ եռամսյակ	111	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		դրանց տարածումը կանխելու համար միջոցառումների իրականացման մասին 2000թ. մայիսի 8-ի թիվ 2000/29 Խորհրդի դիրեկտիվ				
4.	«Էկոլոգիապես (կենսաբանորեն) մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Գյուղատնտեսական ապրանքների էկոլոգիապես մաքուր արտադրության և այդպիսի գյուղատնտեսական ապրանքների ու սննդամթերքի նշումների մասին 1991թ. հունիսի 24-ի թիվ 2092/91 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն)	4-րդ եռամսյակ	220	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Սննդամթերքի օրենքի հիմնական սկզբունքներն ու պահանջները սահմանելու, սննդամթերքի անվտանգության հարցերով եվրոպական կառույց ստեղծելու և սննդամթերքի անվտանգության հարցերի ընթացակարգեր հաստատելու մասին 2002թ. հունվարի 28-ի թիվ 178/2002 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	136	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	«Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Թարմ պտուղ-բանջարեղենի համար կիրառվող մարքեթինգային ստանդարտների համապատասխանության ստուգման մասին 2001թ. հունիսի 12-ի թիվ 1148/2001 Հանձնաժողովի կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	29	Նախնական փորձաքննություն
7.	«Կենդանական և բուսական ծագման ապրանքներում պեստիցիդների և նիտրատների առավելագույն մնացորդների քանակը հաստատելու	Պտուղ-բանջարեղենում պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	120	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	մասին» համապատասխան ակտի նախագծի մշակում	մասին 1976թ. նոյեմբերի 23-ի թիվ 76/895Խորհրդի դիրեկտիվ Համայնքում կենդանական և բուսական ծագում ունեցող ապրանքներում պեստիցիդների մնացորդային քանակի հսկելու համար նմուշառման մեթոդների ստեղծման մասին 2002թ. հուլիսի 11-ի թիվ 2002/63 Հանձնաժողովի դիրեկտիվ Բուսական ծագում ունեցող որոշ ապրանքներում (ներառյալ պտուղ-բանջարեղենը) պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու մասին 1990թ. նոյեմբերի 27-ի թիվ 90/642 Խորհրդի դիրեկտիվ Հացահատիկային մշակաբույսերում պեստիցիդների մնացորդների առավելագույն քանակը հաստատելու մասին 1986թ. հուլիսի 24-ի թիվ 86/362 Խորհրդի դիրեկտիվ				
8.	«Անասնակերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Սննդամթերքի և անասնակերի օրենքի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների առողջության և անասնապահության կանոնների համապատասխանությունը ստուգելու համար պաշտոնական ստուգումներ կազմակերպելու մասին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	4-րդ եռամսյակ	122	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		2004թ. ապրիլի 29-ի թիվ 882/2004 Խորհրդի կանոնակարգ				
ԸՆԴԱՄԵՆԸ					753	
2007						
9.	«ՀՀ-ում սննդամթերքի անվտանգությունն ապահովող ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Սննդամթերքի և անասնակերի օրենքի, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների առողջության և անասնապահության կանոնների համապատասխանությունը ստուգելու համար պաշտոնական ստուգումներ կազմակերպելու մասին 2004թ. ապրիլի 29-ի թիվ 882/2004 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1-րդ եռամսյակ	20	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
10.	«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	ԵՄ տարածքում առևտրի ընթացքում անասնաբուժական վերահսկողության մասին, 1989թ. դեկտեմբերի 11-ի թիվ 89/662 Խորհրդի դիրեկտիվ ԵՄ տարածքում կենդանիների հիվանդությունների ծանուցման մասին 1982թ. դեկտեմբերի 21-ի թիվ 82/894 Խորհրդի դիրեկտիվ Կենդանիների սերմնահեղուկի, սաղմի, ձվաբջիջների Համայնքի տարածքում առևտրի և ներմուծման ընթացքում կենդանիների առողջության պահանջների վերաբերյալ 1992թ. հուլիսի 13-ի թիվ 92/65 Խորհրդի դիրեկտիվ Անասնաբուժության բնագավառում ծախսերի մասին 1990թ. հունիսի 26-ի թիվ 90/424 Խորհրդի որոշում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1-ին եռամսյակ	145	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
11.	• «Անասնակերում օգտագործվող լրացակերերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում • «Անասնակերում անցանկալի նյութերի օգտագործումը կանխելու մասին» ՀՀ կառավարության	Անասնակերային մթերքում որոշակի հավելանյութերի թույլատրելու 1998թ. հուլիսի 3-ի թիվ 1436/98 Հանձնաժողովի կանոնակարգ Կենդանիների սնուցման համար հատուկ նյութերի օգտագործման	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1-ին եռամսյակ	54	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	որոշման նախագծի մշակում	մասին 1982թ. հունիսի 30-ի թիվ 82/471Խորհրդի դիրեկտիվ Անասնակերում անցանկալի նյութերի մասին 2002թ. մայիսի 7-ի թիվ 2002/32 Խորհրդի դիրեկտիվ Կենդանիների սնուցման համար օգտագործվող հատուկ նյութերի գնահատման ուղեցույցերը սահմանող 1983թ. ապրիլի 18-ի թիվ 83/228 Խորհրդի դիրեկտիվ				
12.	«Անասնապահական բեռների միջազգային և միջպետական փոխադրումների ժամանակ անասնաբուժական պետական հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀկառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի մշակում	Կենդանիների և կենդանական ծագում ունեցող ապրանքների սերտիֆիկացման մասին 1996թ. դեկտեմբերի 17-ի թիվ 96/93 Խորհրդի դիրեկտիվ Երրորդ երկրներից համայնք ներկրված ապրանքների անասնաբուժական ստուգման համար պատասխանատու սահմանային հսկիչ կետերի հաստատման պահանջների մասին 2001թ. նոյեմբերիր 21-ի թիվ 2001/812 Հանձնաժողովի որոշում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2-րդ եռամսյակ	22	Նախնական փորձաքննություն
13.	«Թռչնամսի, ձվի և ձվամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող պահանջները» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	Ձվամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող հիգիենիկ և առողջապահական խնդիրների մասին 1989թ. հունիսի 20-ի թիվ 89/437 Խորհրդի դիրեկտիվ Թռչնի և թխսված ձվի ներմուծումները և ներհամայնքային առևտուրը ղեկավարող կենդանիների առողջության պայմանների մասին 1990թ. հոկտեմբերի 15-ի թիվ 90/539Խորհրդի դիրեկտիվ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	3-րդ եռամսյակ	77	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
14.	«Մսի և մսամթերքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող պահանջները» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	Համայնքի մանր եղջերավոր անասունների ամբողջական մսեղիքի դասակարգման սանդղակի և Համայնքի ոչխարի թարմ մսի և ամբողջական մսեղիքի որակի ստանդարտի սահմանման մասին 1992թ. հուլիսի 23-ի թիվ 2137/92	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	3-րդ եռամսյակ	124	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		Հանձնաժողովի կանոնակարգ 1991թ. հուլիսի 29-ի թիվ 91/497 Խորհրդի դիրեկտիվ, որով փոփոխվում և խմբավորվում են թարմ մսի անդր-համայնքային առևտրի վրա ազդող առողջապահական խնդիրների մասին թիվ 64/433 դիրեկտիվը, այն տարածելով թարմ մսի արտադրության և իրացման վրա				
15.	«Ընտանի թռչնի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Ընտանի թռչնի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին 1990թ. հունիսի 26-ի թիվ 1906/90 Խորհրդի կանոնակարգ Թխսկան հավեր պահելու համար նվազագույն ստանդարտներ սահմանելու մասին 1999թ. հուլիսի 19-ի թիվ 1999/74 Խորհրդի դիրեկտիվ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	53	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
16.	«Ձվի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում	Ձվի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին 1990թ. հունիսի 26-ի թիվ 1907/90 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմին	4-րդ եռամսյակ	16	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**511**	
2008						
17.	«Մարդկանց սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի առողջապահական կանոնների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Մարդկանց սպառման համար չնախատեսված կենդանական ծագման հումքի առողջապահական կանոնների մասին 2002թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 Խորհրդի կանոնակարգ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2-րդ եռամսյակ	230	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
18.	«Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության մասին 1998թ. հուլիսի 20-ի թիվ 98/58 Խորհրդի դիրեկտիվ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	3-րդ եռամսյակ	16	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**246**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**1530**	

2 2. Ինստիտուցիոնալ կարողություններ[23]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Սննդամթերքի հիգիենայի և HACCP-ի վերաբերյալ դասընթաց (7 օր / 2006թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Սննդամթերքի անվտանգության մենեջմենթի վերաբերյալ դասընթացներ (2006-2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Սննդամթերքի վերահսկողության լաբորատորիաների աշխատակիցների համար սեմինարներ (որակի ապահովում, վիճակագրական մեթոդների օգտագործում, անալիզների մեթոդներ) (2006-2007թթ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմին	Սննդամթերքի անվտանգության գործակալության ստեղծում (2007թ. 3-րդ եռամսյակ) Սննդամթերքի օրենքի հիմնական սկզբունքներն ու պահանջները հաստատելու, սննդամթերքի անվտանգության հարցերով եվրոպական կառույց ստեղծելու և սննդամթերքի անվտանգության հարցերի ընթացակարգեր հաստատելու մասին 2002թ. հունվարի 28-ի թիվ 178/2002 Խորհրդի կանոնակարգ	Սննդամթերքի անվտանգության գործակալության գործառույթների և դրանց իրականացման հետ կապված դասընթացներ (2006-2007) և վերապատրաստում	Խորհրդատվություն, վերապատրաստում

[23] Օրենսդրական համապատասխանեցման աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունում և գերատեսչությունում կստեղծվի ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանում

3.Շուկաների ընդհանրական կազմակերպում

Ներածություն

Եվրոպական Միության տնտեսական քաղաքականության ամենակարևոր և մեծ բաղադրիչներից մեկը Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության (ԸԳՔ) գործակառույցն է: Ընդ որում, ԵՄ գյուղատնտեսական քաղաքականության իրավական հիմքն ապահովվում է ԵՀ Համաձայնագրի 2-րդ գլխի 32-ից 38-րդ հոդվածներով: ԸԳՔ-ին բաժին է ընկնում ԵՄ բյուջեի մոտ 50 տոկոսը (չնայած այն նվազել է վերջին տարիների ընթացքում): ԸԳՔ-ի նպատակներին հասնելու համար ԵՀ Համաձայնագրի 34-րդ հոդվածով նախատեսված է ստեղծել գյուղատնտեսական շուկաների ընդհանրական կազմակերպման (ՇԸԿ) գործակառույցներ: ՇԸԿ-ները դրամավորվում են Եվրոպական գյուղատնտեսական ուղեցուցային և երաշխիքային հիմնադրամի (ԵԳՈՒԵՀ՝ European Agricultural Guidance and Guarantee Fund՝ EAGGF) միջոցներից, գլխավորապես դրա երաշխիքային մասից, և կազմում են հիմնադրամի ծախսերի ծանրակշիռ մասը: Գոյություն ունեն տասնութ ՇԸԿ-ներ, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է մեկ կամ մի քանի հիմնային կամ վերամշակված արտադրատեսակների: Միայն փոքր թվով արտադրանքների շուկաներ են, որ չեն կարգավորվում ՇԸԿ-ով, մասնավորապես, կարտոֆիլի և մեղրի շուկաները:

ՇԸԿ-ները, որպես գործակառույց, կարող են ընդունել հետևյալ երեք ձևերից մեկը.

- մրցակցության ընդհանուր կանոններ,
- տարբեր ազգային շուկաների կազմակերպությունների պարտադիր համակարգում,
- Եվրոպական շուկայի կազմակերպություն:

ՇԸԿ-ները գործիքներ են ԵՄ-ի ներսում գյուղատնտեսական արտադրանքների առևտրի խոչընդոտների վերացման, երրորդ երկրների նկատմամբ ընդհանուր մաքսային խոչընդոտի պահպանման, ինչպես նաև ներմուծվող գյուղատնտեսական արտադրանքների նկատմամբ ԵՄ-ի տեղական արտադրանքներին արտոնություններ տալու (օրինակ՝ գնային) համար: ՇԸԿ-ները գործնականում կարգավորում են գյուղատնտեսական առանձին արտադրանքների արտադրության, փոխադրման, պահեստավորման և շուկայահանման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև որոշ արտադրանքների մասով սահմանում են տեխնիկական կանոնակարգեր ու համօրինակներ (ստանդարտներ), դասակարգման սանդղակներ (օրինակ՝ շաքարի, մսի շուկայում) ու հասցեագրում են մտավոր սեփականության հետ կապված հարցեր (օրինակ՝ գինիների շուկայում): Դրանք կարող են ներառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են գների կարգավորումը, տարբեր արտադրանքների արտադրության և շուկայահանման համար տրամադրվող աջակցությունը, պահեստավորումների համար տրամադրվող աջակցությունը, արտահանման լրավճարումը և այլն:

Հարկ է նշել, որ սկսած 2005 թվականի հունվարից՝ ԵՄ-ի՝ ԸԳՔ-ի վերափոխման շրջանակներում փոփոխության է ենթարկվում նաև գյուղատնտեսական արտադրողներին ուղղակի լրավճարների տրամադրման սկզբունքը: Արտադրողներին տրվող ուղղակի վճարումներն այժմ ստանում են արտադրության հետ կապ չունեցող եկամտային աջակցության տեսք (այսպես կոչված՝ decoupled income support), ընդ որում, այդ փոփոխությունը տարածվում է ՇԸԿ-ների մեծամասնության վրա: Նոր համակարգը կոչված է ագարակատերերի համար հավասարակշռված եկամուտ ապահովելու՝ առանձին ագարակներին տրվող վճարումների միջոցով, ընդ որում՝ տրվող վճարումը կապված չէ արտադրության հետ, և ագարակատերերն իրենք կարող են ինքնուրույն որոշել, թե ինչ և ինչքան են արտադրում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության և Եվրամիության վարած գյուղատնտեսական քաղաքականությունները սզբունքորեն տարբերվում են միմյանցից: Գյուղատնտեսական արտադրանքների շուկան (ներառյալ՝ արտաքին առևտրային ռեժիմը) ՀՀ-ում շատ ավելի ազատական է, քան ԵՄ շուկան, իսկ գյուղատնտեսական արտադրությանը տրամադրվող պետական աջակցություն համակարգն էականորեն տարբեր է ԵՄ համակարգից: ՀՀ-ում կիրառվող պետական աջակցության համակարգը, ԵՄ համակարգի հետ համեմատած, նախ, շատ ավելի պարզունակ է ու թույլ կարգավորված (խստորեն ասած՝ այդպիսի համակարգ պրակտիկորեն գոյություն չունի) և, երկրորդ, չափերով աննշան է: Դրան զուգահեռ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում գյուղատնտեսական աջակցության մասով ՀՀ ստանձնած պարտավորությունները[24] բնույթով տարբեր ու նշանակալիորեն ավելի խիստ ու սահմանափակ են ԵՄ պարտավորություններից:

---

[24] ԱՀԿ շրջանակներում գյուղատնտեսության մասով ՀՀ ստանձնած պարտավորությունները հետևյալն են. շուկայի մատչելիության կապակցությամբ Հայաստանը համաձայնել է գյուղատնտեսական բոլոր արտադրանքների համար, բացառությամբ մի քանի անվանում արտադրանքների, մաքսի դրույքաչափի վերին սահմանն ամրագրել 15 տոկոսի վրա:

Գյուղատնտեսության ոլորտում ներքին աջակցության և արտահանման լրավճարման առնչությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

ա) արտահանման լրավճարման մակարդակն ամրագրված է զրոյի վրա, այսինքն՝ Հայաստանը իրավունք չի ունենա իր գյուղատնտեսական արտադրանքների համար արտահանման լրավճարներ տրամադրելու.

Այս բնագավառում քաղաքականության մասով և (կամ) օրենսդրական մոտարկման խնդրին անդրադառնալիս Հայաստանի սահմանակարգային ու մարդկային ներուժի հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել այս գործոնները, ինչպես նաև երկու այլ հանգամանքներ:

Առաջին, ՇԸԿ-երի գործակառույցները զգալի մասով առնչվում են միայն ԵՄ անդամ երկրներին (օրինակ՝ արտաքին առևտրի ռեժիմը) և, երկրորդ, ԵՄ գյուղատնտեսական քաղաքականությունը, ներառյալ՝ ՇԸԿ-ների համակարգը, գտնվում են վերափոխման փուլում (վերափոխումները պայմանավորված են ու կլինեն, մասնավորապես, ԱՀԿ-ի շրջանակներում ընթացող բազմակողմ բանակցությունների՝ Դոհայի փուլի արդյունքներով): Ինչպես նշվեց, Հայաստանը ԵՄ-ում կիրառվող՝ գյուղատնտեսական շուկաների ընդհանրական կազմակերպման (ՇԸԿ) գործակառույցներ չունի և դրանցով նախատեսված միջոցներ չի կիրառում: Այդուհանդերձ, Հայաստանը չունի շուկաների ընդհանրական կազմակերպման ոլորտն ուղղակիորեն կարգավորող օրենսդրություն, ինչպիսին առկա է ԵՄ-ում:

Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքների արտադրությանը և առևտրին (ներքին և արտաքին) վերաբերող օրենսդրությունը ներառում է Մաքսային օրենսգիրքը[25], «Ներքին շուկայի պաշտպանության մասին»[26], «Համապատասխանության գնահատման մասին»[27] ՀՀ օրենքները և այլ իրավական փաստաթղթեր: Գինու շուկային առնչվող մտավոր սեփականության հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Մտավոր սեփականություն» բաժնով[28], «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին»[29], «Սննդամթերքի անվտանգության մասին»[30], «Գովազդի մասին»[31], «Ֆիրմային անվանումների մասին»[32] ՀՀ օրենքներով և այլն:

Հայաստանում չկան նաև առանձին գյուղատնտեսական արտադրանքների շուկաների կարգավորման համակարգեր ու համապատասխան իրավական փաստաթղթեր: Ի տարբերություն ԵՄ համակարգի՝ Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ու շուկայահանման հետ կապված խնդիրներն ու հարաբերություններն ավելի շուտ դիտարկվում և հասցեագրվում են արտադրության ու առևտրի ընդհանուր կազմակերպման շրջանակներում: Խիստ իրավական առումով օրենսդրական համապատասխանություն գյուղատնտեսական արտադրանքների շուկաների կարգավորման բնագավառում չկա:

Նմանապես, Հայաստանը չունի նաև գյուղատնտեսական շուկաների ընդհանուր կազմակերպման խնդիրների համակարգման ու իրականացման հատուկ գործակառույցներ ու հաստատություններ, ինչպիսիք առկա են ԵՄ-ում (օրինակ՝ Եվրոպական գյուղատնտեսական ուղեցուցային և երաշխիքային հիմնադրամը (ԵԳՈՒԵՀ կամ EAGGF), լրավճարների և այլ կարգի աջակցությունների տրամադրման ու բաշխման համար գործող կառույցները, արտադրանքների գնումներով ու պահեստավորմամբ զբաղվող գործակալությունները, գնային միջամտության գործակալությունները և այլն):

Հաշվի առնելով վերոնշյալը և ելնելով մոտակա ապագայում Հայաստանում կանխատեսելի միտումներից (ներառյալ՝ ՀՀ միջազգային պարտավորությունները[33])՝ հարկ է՝ գյուղատնտեսության մասով օրենսդրական մոտարկմանը վերաբերվել վերապահումներով: Մոտարկման հարցում կցուցաբերվի ընտրանքային մոտեցում (ընտրանք՝ ըստ արտադրանքի, ինչպես նաև ըստ

բ) գյուղատնտեսական աջակցության համախառն չափի (ԱՀՀ-ի) մակարդակն ամրագրված է զրոյի վրա, այսինքն՝ Հայաստանից պահանջվելու է «դեղին զամբյուղի» լրավճարման մակարդակը պահել ընդամենը ներքևի «գ» կետում նշված նվազագույնի սահմաններում.

գ) առանձին ապրանքի հետ կապված և ապրանքի հետ չկապված ներքին աջակցության *նվազագույն* մակարդակը մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ը կլինի 10 տոկոս, իսկ 2009թ. հունվարի 1-ից սկսած՝ 5 տոկոս, այսինքն՝ 2009թ. հունվարի 1-ից սկսած՝ Հայաստանից կպահանջվի «դեղին զամբյուղի» լրավճարումը սահմանափակել տվյալ տարվա գյուղատնտեսական արտադրության արժեքի 5 տոկոսով.

դ) 2009թ. հունվարի 1-ից Հայաստանը կվերացնի գյուղատնտեսական տեղական արտադրանքների՝ արտադրողի կողմից իրացման և անասնաբուժական միջոցների իրացման նկատմամբ կիրառվող՝ ավելացված արժեքի հարկից ազատումը, այսինքն՝ 2009թ.-ից սկսած՝ գյուղատնտեսական արտադրողների նկատմամբ ևս կկիրառվի ավելացված արժեքի հարկը:

[25] ՀՕ-83, 06.07.2000 թ.:
[26] ՀՕ-175, 18.04.2001 թ.:
[27] ՀՕ-82, 26.05.2004 թ.:
[28] ՀՕ-239, 05.05.1998 թ.:
[29] ՀՕ-41, 20.03.2000 թ.:
[30] ՀՕ-25, 08.12.1999 թ.:
[31] ՀՕ-55, 30.04.1996 թ.:
[32] ՀՕ-20, 23.11.1999 թ.:

[33] Օրինակ, ԱՀԿ պարտավորությունների համաձայն՝ ՀՀ-ն չի կարող արտահանման լրավճարներ կիրառել, իսկ սահմանափակման ենթակա (կամ այսպես կոչված՝ «դեղին զամբյուղի») լրավճարների չափը, սկսած 2009 թվականից, չի կարող գերազանցել ընդհանուր գյուղատնտեսական արտադրության 5 տոկոսը (իսկ առանձին արտադրանքի մասով՝ տվյալ արտադրանքի արտադրության ծավալի 5 տոկոսը):

քաղաքականության միջոցի) հատկապես գնային քաղաքականության, արտաքին առևտրային ռեժիմի և գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների ընտրության հարցերում: Ծրագրով նախատեսվում է համահունչություն ապահովել գյուղատնտեսական արտադրանքների նկատմամբ կիրառվող որակական և անվտանգության պահանջների, ինչպես նաև արտադրանքների դասակարգմանն ու դրանց շուկայահանմանը վերաբերող պահանջների և ստանդարտների մասով:

2006 թվական

Հաշվի առնելով գինիների արտադրության կարևորությունը Հայաստանի տնտեսության համար՝ կընդունվի օրենք «Խաղողի և խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին»: Դրանով կապահովվի մասնակի համապատասխանություն Խորհրդի թիվ (EC) 1493/1999 կանոնակարգի[34] հետ:

2007 թվական

Գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսական արտադրանքների շուկայահանման ոլորտներում պետական աջակցության (միջամտության) միջոցների ու դրանց նպատակների և իրականացման ընդհանուր սկզբունքների սահմանման համար կընդունվի հենքային իրավական փաստաթուղթ (ռազմավարական ծրագիր), որը մշակելիս, ելնելով Հայաստանում առկա իրավիճակից ու կարիքներից, հաշվի կառնվի նաև ԵՄ օրենսդրության հետ ընտրանքային համահունչության ապահովման հարցը:

Կընդունվի համապատասխան օրենք, որով հող կնախապատրաստվի ԱՀԿ պարտավորությունների առավել արդյունավետ կատարման համար: ԱՀԿ շրջանակներում Հայաստանի ստանձնած՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող պարտավորությունները բավական խիստ են և դրանց իրականացումը անհրաժեշտ նախապատրաստական միջոցներ չձեռնարկելու դեպքում կարող է հանգեցնել տնտեսական ու սոցիալական լուրջ բարդությունների: Բարդություններն ու խնդիրները վերաբերում են, մասնավորապես՝

ա) հարկային դաշտում կատարվելիք փոփոխությունների հետ, որոնք կարող են մեծացնել հարկային բեռը գյուղատնտեսական արտադրողների վրա,

բ) գյուղատնտեսությանը հատկացվող պետական աջակցության չափերի սահմանափակմանը,

գ) ԱՀԿ գյուղատնտեսության մասին համաձայնագրով սահմանված՝ պետական աջակցության՝ «կանաչ զամբյուղի» տակ ընկնող միջոցների կիրառման համար անհրաժեշտ կառույցների, գործակառույցների ու մասնագետների բացակայությանը կամ անբավարար լինելուն:

Գյուղատնտեսական արտադրության և գյուղատնտեսական արտադրանքների շուկայահանման ոլորտներում պետական աջակցության (միջամտության) հենքային փաստաթղթի կիրարկման նպատակով ընտրանքային կերպով (ելնելով նպատակահարմարությունից և անհրաժեշտությունից) յուրաքանչյուր առանձին արտադրանքի կամ աջակցության (միջամտության) առանձին միջոցի առնչությամբ կընդունվեն առանձին գյուղատնտեսական արտադրանքների շուկաների (կամ քաղաքականության առանձին միջոցների) մասին իրավական փաստաթղթեր: Դրանցով յուրաքանչյուր առանձին դեպքի համար կսահմանվեն համապատասխան սկզբունքներ, կանոնակարգեր և ընթացակարգեր:

Կընդունվի «Մանր եղջերավոր անասունների ամբողջական մսեղիքի (կարկաս) դասակարգման սանդղակի, ինչպես նաև թարմ ու սառեցված ամբողջական մսեղիքի նկատմամբ պահանջների սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշում, որով կապահովվի համապատասխանություն Հանձնաժողովի թիվ (EEC) 2137/92 կանոնակարգի[35] հետ:

Նմանատիպ որոշում կընդունվի նաև տավարի մսեղիքի վերաբերյալ՝ ապահովելով համապատասխանությունը Խորհրդի թիվ 1208/81 կանոնակարգի[36] հետ:

Թռչնի մսի և ձվի շուկայի կանոնակարգման համար կընդունվեն «Ընտանի թռչնի և ձվի շուկայահանման վերաբերյալ պահանջների սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշում՝ ապահովելով համապատասխանությունը Խորհրդի 1906/90 և 1907/90 կանոնակարգերի[37] հետ:

---

[34] 1999թ. մայիսի 19-ի Խորհրդի կանոնակարգ (EC) թիվ 1493/1999՝ «Գինու շուկայի ընդհանրական կազմակերպման մասին»:

[35] 1992թ. հուլիսի 23-ի Հանձնաժողովի կանոնակարգ (EEC) թիվ 2137/92՝ Համայնքի՝ «Մանր եղջերավոր անասունների ամբողջական մսեղիքի (կարկաս) դասակարգման սանդղակին և Համայնքի՝ ոչխարի թարմ և սառեցրած ամբողջական մսեղիքի որակի համօրինակի (ստանդարտի) սահմանման մասին», որով երկարաձգվում է (EEC) թիվ 338/91 կանոնակարգը:

[36] 1981թ. հունիսի 28-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1208/81՝ «Տավարի մսեղիքի դասակարգման Համայնքի սանդղակի որոշման մասին»:

[37] 1990թ. հունիսի 26-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1906/90՝ Ընտանի թռչնի համար որոշակի շուկայահանման ստանդարտներ սահմանելու մասին», 1990թ. հունիսի 26-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1907/90՝ «Ձվի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին»:

2008 թվական

Կշարունակվի ընտրանքային կերպով (ելնելով նպատակահարմարությունից և անհրաժեշտությունից) յուրաքանչյուր առանձին արտադրանքի կամ աջակցության (միջամտության) առանձին միջոցի առնչությամբ՝ առանձին գյուղատնտեսական արտադրանքների շուկաների (կամ քաղաքականության առանձին միջոցների) մասին իրավական փաստաթղթերի ընդունումը: Դրանցով յուրաքանչյուր առանձին դեպքի համար կսահմանվեն համապատասխան սկզբունքներ, կանոնակարգեր և ընթացակարգեր:

Կընդունվի «Թխսկան հավեր պահելու համար նվազագույն պահանջների սահմանման մասին» ՀՀ կառավարության որոշում, որով կապահովվի համապատասխանություն Հանձնաժողովի թիվ (EEC) 1999/74 դիրեկտիվի[38] հետ: Այնուհետև կընդունվի «Խոզի մսից պատրաստված մթերքում մսի և ճարպի պարունակությունը որոշելու ընթացակարգի վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշում՝ ապահովելով համապատասխանությունը Խորհրդի 2004/2002 կանոնակարգի[39] հետ:

[38] 1999թ. հուլիսի 19-ի Խորհրդի հրահանգ թիվ 1999/74՝ «Թխսկան հավեր պահելու համար նվազագույն ստանդարտներ սահմանելու մասին»:

[39] 2002թ. նոյեմբերի 8-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2004/2002՝ «Խոզի մսից պատրաստված մթերքում մսի և ճարպի պարունակությունը որոշելու ընթացակարգի վերաբերյալ»:

3.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2006						
1.	«Խաղողի և խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» օրենքի նախագծի մշակում	Խորհրդի կանոնակարգ (EC) թիվ 1493/1999, 1999 թվականի մայիսի 19, գինու շուկայի ընդհանրական կազմակերպման մասին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	252	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					252	
2007						
2.	Մանր եղջրավոր անասունների ամբողջական մսեղիքի (կարկաս) դասակարգման սանդղակի, ինչպես նաև թարմ ու պաղեցրած ամբողջական մսեղիքի նկատմամբ պահանջների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Հանձնաժողովի կանոնակարգ (EEC) թիվ 2137/92, 1992 թվականի հուլիսի 23, որը վերաբերում է Համայնքի՝ մանր եղջրավոր անասունների ամբողջական մսեղիքի (կարկաս) դասակարգման սանդղակին և Համայնքի՝ ոչխարի թարմ և պաղեցրած ամբողջական մսեղիքի որակի համօրինակի (ստանդարտի) սահմանմանը, և որով երկարաձգվում է (EEC) թիվ 338/91 կանոնակարգը	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	Տավարի մսեղիքի (կարկաս) դասակարգման սանդղակի, ինչպես նաև թարմ ու պաղեցրած ամբողջական մսեղիքի նկատմամբ պահանջների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Եվրոպական խորհրդի Կանոնակարգ թիվ 1208/81, 1981թվականի հունիսի 28, Տավարի մսեղիքի դասակարգման Համայնքային սանդղակի	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		որոշման մասին				
4.	Ընտանի թռչնի շուկայահանման վերաբերյալ պահանջների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի կանոնակարգ թիվ 1906/90, 1990 թվականի հունիսի 26, Ընտանի թռչնի համար որոշակի շուկայահանման ստանդարտներ սահմանելու մասին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	Ձվի շուկայահանման վերաբերյալ պահանջների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի կանոնակարգ թիվ 1907/90, 1990 թվականի հունիսի 26, Ձվի համար որոշակի մարքեթինգային ստանդարտներ սահմանելու մասին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**120**	
2008						
6.	Թխսկան հավեր պահելու համար նվազագույն պահանջների սահմանման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի հրահանգ թիվ 1999/74, 1999 թվականի հուլիսի 19, Թխսկան հավեր պահելու համար նվազագույն ստանդարտներ սահմանելու մասին	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	50	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	Խոզի մսից պատրաստված մթերքում մսի և ճարպի պարունակությունը որոշելու ընթացակարգի մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի թիվ 2004/2002 կանոնակարգ, 2002 թվականի նոյեմբերի 8, Խոզի մսից պատրաստված մթերքում մսի և ճարպի պարունակությունը որոշելու ընթացակարգի վերաբերյալ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	20	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**70**	
ԸՆԴԱՄԵՆԸ					**442**	

3.2. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	• Համապատասխան հաստիքների ստեղծում • ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության համալրումը գյուղատնտեսության հարցերի համար պատասխանատու հաստիքի ստեղծմամբ	ԱՀԿ-ի գյուղատնտեսության վերաբերյալ դրույթների, ինչպես նաև ԱՀԿ-ի գյուղատնտեսության մասով պարտավորությունների ու դրանց կատարման վերաբերյալ դասընթացներ (10 օր, 2006 թ.)	Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	Գյուղատնտեսական արտադրության և շուկայահանման ոլորտներում պետական միջամտության եղանակների ու ձևերի վերաբերյալ դասընթացներ	Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան գործակալությունների ստեղծում (օրինակ՝ գնային միջամտության գործակալություն, լրավճարների հաստեագրման ու բաշխման գործակալություն)		Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ մարզպետարաններ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ	-	Դասընթացներ ըստ անհրաժեշտության	Վերապատրաստում, խորհրդատվություն

.3.3 Քաղաքականության համապատասխանեցում և իրագործում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	Գյուղատնտեսական արտադրության և շուկայահանման ոլորտներում պետական աջակցության (միջամտության) մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն)	1-ին եռամսյակ	150	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում ՀՀ ստանձնած՝ գյուղտտնտեսության մասով պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Խորհրդի կանոնակարգ (EC) թիվ 3290/1994, 1994 թվականի դեկտեմբերի 22, գյուղատնտեսական հատվածում պահանջվող փոփոխությունների և անցումային միջոցառումների մասին, որոնք կոչված են իրականացնելու Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի ընթացքում ձեռքբերված համաձայնությունները	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն)	1-ին եռամսյակ	150	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	Առանձին գյուղատնտեսական արտադրանքների շուկաների (կամ քաղաքականության առանձին միջոցների) մասին ՀՀ օրենքների կամ ՀՀ կառավարության որոշումների	-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման	3-րդ եռամսյակ	150	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	նախագծերի մշակում՝ կախված դեպքից		նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն,)			
ԸՆԴԱՄԵՆԸ					450	
2008						
4.	Առանձին գյուղատնտեսական արտադրանքների շուկաների (կամ քաղաքականության առանձին միջոցների) մասին օրենքների կամ կառավարության որոշումների նախագծերի մշակում՝ կախված դեպքից	-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն)	2-րդ եռամսյակ	150	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					150	
ԸՆԴԱՄԵՆԸ					600	

4. Գյուղական զարգացում

Ներածություն

Եվրոպական միության տնտեսական քաղաքականության ամենակարևոր և մեծ բաղադրիչներից մեկը Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության (ԸԳՔ) գործակառույցն է: Ընդ որում, ԵՄ գյուղատնտեսական քաղաքականության իրավական հիմքն ապահովվում է ԵՀ Համաձայնագրի 2-րդ գլխի 32-ից 38-րդ հոդվածներով: ԸԳՔ-ին բաժին է ընկնում ԵՄ բյուջեի մոտ 50 տոկոսը (չնայած այն նվազել է վերջին տարիների ընթացքում): ԸԳՔ-ի շարունակական բարեփոխումների ներկա փուլում գյուղական զարգացումը համարվում է գյուղատնտեսական քաղաքականության երկրորդ հենասյունը և գնալով ավելի ու ավելի մեծ կարևորություն է ստանում:

Գյուղական զարգացման քաղաքականության ԵՄ հենքային իրավական փաստաթղթով[40] սահմանվում են գյուղական զարգացման հիմնական նպատակներն ու դրանց կատարմանն ուղղված միջոցները, որոնց իրականացման համար ուղղակի հատկացումներ են կատարվում Եվրոպական ուղեցուցային և երաշխիքային հիմնադրամի միջոցներից (ԵԳՈՒԵՀ կամ European Agricultural Guidance and Guarantee Fund՝ EAGGF՝ անգլերեն), գլխավորապես դրա ուղեցուցային մասից: Դրանք են, մասնավորապես՝

ա) գյուղացիական տնտեսություններում ներդրումային օժանդակությունը,
բ) երիտասարդ ագարակատերերին տրամադրվող օժանդակությունը,
գ) առավել անբարենպաստ շրջաններում և բնապահպանական առանձնահատուկ սահմանափակումներ ունեցող շրջաններում գործող ագարակատերերին տրամադրվող վճարումները,
դ) բնապահպանական օժանդակությունը,
ե) սննդամթերքի որակի և անվտանգության համար տրամադրվող օժանդակությունը,
զ) սննդամթերքի վերամշակման և շուկայահանման համար տրամադրվող օժանդակությունը,
է) անտառների բնապահպանական, տնտեսական և սոցիալական դերերի կատարելագործման համար տրամադրվող օժանդակությունը,
ը) գյուղական վայրերի զարգացման և տեղի ունեցող փոփոխություններին դրանց հարմարեցման համար տրամադրվող օժանդակությունը և այլն:

Համաձայն գյուղական զարգացման նոր ծրագրի (2007-2013 թթ. ծրագիր)՝ գյուղական զարգացմանն ուղղված միջոցառումները կդրամավորվեն Գյուղական զարգացման եվրոպական գյուղատնտեսական հիմնադրամից, իսկ կառավարման ու վերահսկողության համակարգն ավելի կպարզեցվի: Գյուղական զարգացման նոր ծրագիրը նպատակ ունի՝

ա) բարձրացնելու գյուղատնտեսության մրցունակությունը վերակազմակերպման միջոցով, ինչպես նաև այնպիսի միջոցներով, ինչպիսիք են ներդրումային օժանդակությունը երիտասարդ ագարակատերերին, տեղեկատվության բարելավումը և այլն,
բ) բարելավելու շրջակա միջավայրն ու գյուղական վայրերը՝ հողերի կառավարման համար օժանդակության միջոցով, ինչպես նաև գյուղական զարգացումն ընդգրկելով գյուղական միջավայրի և անտառների պահպանման ու բարելավման ծրագրերում,
գ) բարելավելու գյուղական վայրերի կենսամակարդակը և մեծացնելու տնտեսական գործունեությունների բազմազանությունը,
դ) ներքևից վերև ձևակերպելու և իրականացնելու համայնքային (տեղական) զարգացման ռազմավարական ծրագրերը:

Հայաստանի գյուղական զարգացման միասնական քաղաքականություն, համակարգ ու իրավական փաստաթուղթ ներկայումս չկա: Ի տարբերություն ԵՄ համակարգի՝ ՀՀ-ում գյուղական զարգացմանն առանձնահատուկ կարևոր տեղ չի հատկացվում, և այն ավելի շուտ դիտարկվում և հասցեագրվում է աղքատության ընդհանուր նվազեցման քաղաքականության շրջանակներում:

Ըստ էության, Հայաստանի Հանրապետությունը ԵՄ-ում կիրառվող՝ գյուղական զարգացմանն ուղղված հատուկ օժանդակության միջոցներ չի կիրառում: Այդուհանդերձ, Հայաստանը դեռ չունի գյուղական զարգացման ոլորտն ուղղակիորեն կարգավորող օրենսդրություն, ինչպիսին առկա է ԵՄ-ում: Գյուղական զարգացմանը վերաբերող ՀՀ օրենսդրությունն ընդգրկում է ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի թիվ 682-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին», 2003 թվականի օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշումը՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին»: Գյուղական զարգացմանն առնչվող ՀՀ իրավական փաստաթղթերը

[40] 1999թ. մայիսի 17-ի Խորհրդի կանոնակարգ թիվ (EC) 1257/1999՝ «Եվրոպական գյուղատնտեսական ուղեցուցային և երաշխիքային հիմնադրամի (ԵԳՈՒԵՀ կամ EAGGF՝ անգլերեն) միջոցներից գյուղական զարգացմանն աջակցելու և մի շարք կանոնակարգեր փոփոխելու և չեղյալ համարելու մասին»:

պարունակում են գյուղատնտեսության ու գյուղական զարգացմանը, ինչպես նաև դրան ուղղված միջոցներին վերաբերող միայն ընդհանուր դրույթներ, իսկ դրանցով սահմանված նպատակներն ու խնդիրները համահունչ են ԵՄ համապատասխան իրավական փաստաթղթերով սահմանված նպատակներին: Այնուամենայնիվ, խիստ իրավական առումով օրենսդրական համապատասխանություն գյուղական զարգացման բնագավառում չկա:

Հայաստանի Հանրապետությունը չունի նաև գյուղական զարգացման խնդիրների համակարգման ու իրականացման հատուկ գործակառույցներ ու հաստատություններ, ինչպիսիք առկա են ԵՄ-ում (օրինակ՝ Եվրոպական գյուղատնտեսական ուղեցուցային և երաշխիքային հիմնադրամը (ԵԳՈՒԵՀ կամ EAGGF՝ անգլերեն)[41], գյուղական զարգացման միջոցառումների պատշաճ իրականացման համար յուրաքանչյուր անդամ երկրում գոյություն ունեցող միասնական վարչարարության և վերահսկողության համակարգերը (integrated administration and control system (IACS) և այլն): ՀՀ կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1193-Ն որոշմամբ[42] ստեղծվել է Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, որի նպատակներն ու խնդիրները, սակայն, բավական սահմանափակ են:

Ելնելով Հայաստանի ընդհանուր գյուղատնտեսական զարգացման համապատկերում գյուղական զարգացման կարևորությունից և հաշվի առնելով գյուղական զարգացման խնդիրների արդիականությունն ու սրությունը՝ ՀՀ-ում ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման առումով ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գյուղական զարգացում» ենթագլուխը, վարվող քաղաքականության առումով, մինչև 2008 թվականը համահունչ դարձնելԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Հաշվի առնելով գյուղական զարգացման ոլորտի բազմակողմանիությունն ու համապարփակությունը՝ նպատակահարմար է նախ ընդունել հենքային միասնական իրավական փաստաթուղթ (ռազմավարություն), որով կսահմանվեն գյուղական զարգացման խնդիրները, նպատակներն ու գերակայությունները: Փաստաթղթով կապահովվի մասնակի համապատասխանությունը և (կամ) համահունչությունը Խորհրդի թիվ (EC) 1257/1999 կանոնակարգին և Հանձնաժողովի թիվ (EC) 2603/1999 կանոնակարգին:

Գյուղական զարգացման ռազմավարության և (կամ) ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտություն կլինի պատշաճ սահմանակարգային (ինստիտուցիոնալ) և մարդկային կարողություններ, ինչպես նաև վարչական կառույցներ ստեղծելու: Այդ համակարգի խնդիրները կլինեն՝

ա) համապատասխան ծրագրերի ու ենթածրագրերի մշակումը և (կամ) աջակցությունը դրանց մշակմանը,

բ) պետական աջակցության պատշաճ հասցեագրումն ու բաշխումը,

գ) ծրագրերի մշակման, գնահատման ու դրանց իրականացման հետ կապված ընթացակարգերի և գործառույթների վարումը,

դ) ծրագրերի կատարման ընթացքի դիտանցումն ու վերջնական արդյունքների գնահատումը[43]:

Գյուղական զարգացման ծրագրերի իրականացումը պատշաճորեն կազմակերպելու համար կմշակվի «Գյուղական զարգացման ռազմավարությամբ նախատեսված նպատակների

---

[41] Ըստ նոր ծրագրի՝ գյուղական զարգացման ծրագրերը հետագայում կդրամավորվեն Գյուղական զարգացման Եվրոպական գյուղատնտեսական հիմնադրամից:

[42] 2003թ. սեպտեմբերի 17-ի ՀՀ կառավարությանթիվ 1193-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին»:

[43] Առկա իրավիճակից և նպատակահարմարությունի ելնելով՝ առաջարկվում է համակարգի հետևյալ կազմակերպական ձևը.

ա) ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառուցվածքում ստեղծել գյուղական զարգացման հարցերով զբաղվող ստորաբաժանում՝ համապատասխան լիազորություններով և մարդուժով (կամ այդ գործառույթը հանձնարարել արդեն գոյություն ունեցող ստորաբաժանման), որը պատասխանատու կլինի ոլորտում կատարվող աշխատանքների համակարգման և իրականացման համար,

բ) մարզպետարաններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծել նման ստորաբաժանումներ կամ հաստիքներ,

գ) հաշվի առնելով գյուղական զարգացման բազմակողմանի և համապարփակ բնույթը՝ ստեղծել շահագրգիռ այլ նախարարությունների և գերատեսչությունների հետ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության գործուն վարչական համակարգ և ընթացակարգեր,

դ) նկատի ունենալով գյուղական զարգացման առանձնահատուկ կարևորությունը, հավելյալ ազդեցությունների սոցիալական, տնտեսական, բնապահպանական, մշակութային և այլն) բարձր հավանականությունը՝ հենքային նշանակության որոշումները կայացնել կառավարության որոշումների տեսքով, իսկ գյուղատնտեսության նախարարությունը կատարված(կատարվող) աշխատանքների մասին տարեկան հաշվետվություններ ներկայացնի կառավարությանը:

իրականացման միջոցառումների և ընթացակարգերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Միաժամանակ, գյուղական զարգացման ծրագրերի իրականացումը կպահանջի համապատասխան դրամական միջոցներ: Այդուհանդերձ, հարկ կլինի ընդունել ՀՀ կառավարության որոշում՝ «Գյուղական զարգացումը դրամավորելու մասին»: Դրամավորման խնդրի լուծման երկու հնարավոր ճանապարհներն են՝

ա) ծրագրերի դրամավորումն ուղղակիորեն պետական բյուջեից՝ յուրաքանչյուր տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված համապատասխան հատկացումների միջոցով ,

բ) գյուղական զարգացման հատուկ հիմնադրամի ստեղծումը, որտեղից կդրամավորվեն ծրագրերը:

4.1.Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղական զարգացման հարցերով զբաղվող ստորաբաժանման ստեղծում և(կամ) համապատասխան մասնագետների համար հաստիքների ստեղծում	Գյուղական զարգացման խնդիրների և դրանց լուծման միջոցների, , ինչպես նաև զարգացման ծրագրերի նախագծման ու գնահատման վերաբերյալ դասընթացներ (20 օր / 2006թ.)	Վերապատրաստում , խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	-	Գյուղական զարգացման խնդիրների և դրանց լուծման միջոցների, , ինչպես նաև զարգացման ծրագրերի նախագծման ու գնահատման վերաբերյալ դասընթացներ (20 օր / 2006թ.)	Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ մարզպետարաններ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ	Գյուղական զարգացման հարցերով զբաղվող ստորաբաժանման ստեղծում և(կամ) համապատասխան մասնագետների համար հաստիքների ստեղծում	-	Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ մարզպետարաններ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ	-	Գյուղական զարգացման խնդիրների և դրանց լուծման միջոցների, ինչպես նաև զարգացման ծրագրերի նախագծման ու գնահատման վերաբերյալ դասընթացներ (20 օր / 2006թ.)	Վերապատրաստում, խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

4.2.Քաղաքականության համապատասխանեցում և իրագործում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Գյուղական զարգացման ռազմավարության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	- Խորհրդի՝ թիվ (EC) 1257/1999 կանոնակարգ, 1999 թվականի մայիսի 17, Եվրոպական գյուղատնտեսական ուղեցույցային և երաշխիքային հիմնադրամի (ԵԳՈՒԵՀ՝ European Agricultural Guidance and Guarantee Fund՝ EAGGF անգլերեն) միջոցներից գյուղական զարգացմանն աջակցելու և մի շարք կանոնակարգեր փոփոխելու և չեղյալ համարելու մասին - Հանձնաժողովի՝ թիվ (EC) 2603/1999 կանոնակարգ, 1999 թվականի դեկտեմբերի 9, որով սահմանվում են կանոններ Խորհրդի թիվ (EC) 1257/1999 կանոնակարգով նախատեսված՝ գյուղական զարգացման աջակցությանն անցնելու համար - Հանձնաժողովի ծանուցում Անդամ-երկրներին, 2000 թվականի ապրիլի 14, որով սահմանվում են ուղեցույցներ՝ գյուղական	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն)	3-րդ եռամսյակ	300	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[44] ԼԻԴԵՐ+ ծրագրի նախաձեռնությունը սահմանված է Խորհրդի՝ (EC) թիվ 1260/1999 կանոնակարգով, 1999 թվականի հունիսի 21, որով սահմանվում են կառուցվածքային հիմնադրամների վերաբերյալ ընդհանուր դրույթներ:

		զարգացման վերաբերյալ Համայնքի նախաձեռնության (LEADER +՝ ԼԻԴԵՐ +) համար[44]				
2.	«Գյուղական զարգացման ռազմավարությամբ նախատեսված նպատակների իրականացման միջոցառումների և ընթացակարգերի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	-	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն)	3-րդ եռամսյակ	300	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					600	
ԸՆԴԱՄԵՆԸ					600	